

Թեամբ՝ Հիթանոսութեան բարոյական կործանման առաջն առնել չր կարողացան իսկ քրիստոնէութիւնը կարողացաւ Հիթանոս ժողովրդի և պետութեան աւերակների վերայ բարոյական մի նոր կարգ հաստատել: Այնտեղ պակասում էր բարոյականութեան կրօնական շարժառիթը. ուստի և սոցիլիկան բարոյականութիւնը միայն մի քանի ընտրականների սեպհականութիւն մնաց, անզոր ընդհանրութիւնը դրաւելու: ուստի և անօգուտ ժողովրդական կեանքի համար և առանց ներգործութեան պատմութեան վերայ: Գայց քրիստոնէութեան առաւելութիւնն այն է, որ ամենաբարձր բարոյականութիւնը ի ներքուստ միացնում է կրօնական հաւատի հետ, ուստի և այս կրօնը անանց, բարոյական մի գորութիւն է, որին պատկանում է ապագան և պէտք է պատկանէ ։:

Այս կորստարեր ուղղութեան փայլուն ապացոյցներ են այսօր Ֆրանսիական հանրապետութեան մէջ այնքան յաճախ կրկնուող խայտառակութիւնները, որ մի ընդհանուր անունով պանամայականութիւն են կոչուում և որոնք ուղղակի հեռանք են շահերի բարոյականութեան: Այդ հեռանքն անխուսափելի է, քանի որ 100 գպրոցից 60-ի մէջ ոչ մի բարոյական սկզբունք չի աւանդուում իսկ 40-ի մէջ ևս փոխանակ բարոյականութեան անձնական հայեացքներ ու կուսակցական սկզբունքներ են ներշնչում:



Մ Ե Ն Ե Բ Ե Լ Թ Ի Բ Ե

ՀՐԱՊԱՐԱՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրէական մամուլը. — Հրէական խնդիրն ներդրում պարբերական Sion հրատարակութիւնը. որ լոյս է տեսնում Գերմանիայում: Գետնեւալ Գետաբերական վիճակագրութիւնն է առիտս երրորդական մամուլի մասին: Երբայական մամուլն այսօր քաղկացած է 115 ամսագիրներից և թերթներից, որոնք հրատարակուում են գերմաներէն, Ֆրանսերէն, տաճիկերէն, ոսերէն, լեհերէն, անգլիերէն, երբայեցերէն, արաբերէն, սպանիերէն և այժմեան հրէաբէն լեզուներով: Այս թերթներից 7 ամենօրեայ են, որոնցից 3 երբայերէն են (Վարչաւում, Պետերբուրգում և Սոլոնիկում), 3 հաստ հրէաբէն, այսինքն գերմաներէնից աղծատուած և քաղմաթիւ պլազգի լեզուներից խճողուած մի լեզուով: Հրէական թերթներից ամենից շատը (41) Միացեալ — Նահանգումն են լոյս տեսնում: Աշխարհիս գրեթէ ամեն ծայրերում պարբերական հրատարակութիւններ ունեն հրեաները, այսպէս հարաւային Աիբիկէում, Կասպ գաղութում և Հնդկաստանում:

Ռուսարական մամուլը. — Նորածին Ռուսարիան Գետ գետէ յառաջադիմում է, առ յառաջադիմութիւնը նշկատել է և նրա պարբերական հրատարակութիւնների մէջ: 1894 թուին Ռուսարիայում կային միայն 29 պարբե-

րական հրատարակութիւններ, մինչ այսօր դրանց թիւն է 50: Միմիայն Սոֆիա փոքրիկ մայրաքաղաքում այս տարի մայիս ամսին հրատարակուում էին 21 թերթ: Սակայն զարմանալի է այն երեւոյթը, որ Ռուսարիայում ցարդ ամենօրեայ հրատարակութիւն չկար: Այսօր միայն մի հատ ամենօրեայ թերթ կայ Ռուսարիայում դա է . Սվոբոդան., այս օրերս Սոֆիայի փողոցներից մէկում անգլոօրէն մորթած Նշանատր Ստեփան Ստամբուլի թերթը: Ռուսարական թերթներից շատերը լոյս են տեսնում շաբաթը 2 կամ 3 անգամ: Բացի ընդարձակ թերթներից այստեղ հրատարակում են և օտար լեզուներով լրագիրներ, այսպէս մէկը Ֆրանսերէն «La Bulgarie», մէկը գերմաներէն և 3 հատ յունարէն: Ռուսարական հանդէսների մէջ աչքի ընկնողն է . Միսլ . (Միտր) հանդէսը:

Ռուսական մամուլը. — Ռուսաց պարբերական հրատարակութիւններից ամենից տարածուածն է . Նիսա . շաբաթաթերթը, որ 150,000 քաժանորդ ունի:

Պարբերական թերթերի թանգանալը. — Մինչևիտ Եւրոպայում մամուլն Գետ գետէ աժանանալու վրայ է և թերթերի գնի պակասիլը յառաջադիմութեան նշան է համարուում, վերջերս Միացեալ Նահանգներում հակառակ երեւոյթ է Նկատուում, այստեղ Նշանատր թերթերն սկսել են իրենց գինը բարձրացնել. այն լրագիրները, որոնք առաջ հատով ծախուում էին 5 սանտիմով, այժմ ծախուում են 10 և 15 ու:

Հոգեւոր թղթախառ: — Պապական եկեղեցականներն իրանց հոգեւոր որդոց հաւատի ու բարեպաշտութիւն մէջ պահելու համար դիմում են շատ օտարտե և ինքնուրոյն միջոցների: Բարեպաշտ հոգիների օգտի ու զընուարթութեան, մեղաւորների փրկութեան և քաւարանում եղած հոգիների մեթարութեան համար հարուած է մի առանձին . հոգեւոր թղթախառ ։:

Վիեննայում գտնուած հոմէալական կաթողիկոս . Նորբերտի վաճառատունը հրատարակել է այնպիսի խաղաթղթների կապոցներ, որոնցով կարելի է մի հոգով էլ խաղալ քայց աւելի խրատական լինելու համար՝ լաւ է երկուսով խաղալ: Այդ կապոցից իբրեւ վիճակ հանուում է մի թուղթ, որի մէջ և ամփոփուած է փրկութեան աղբիւրը այլ և այլ բարեպաշտական կարծեաց ու խորհրդածութեանց ծնով: Խաղալու եղանակի մասին կրուած է Գետնեւալ խրատը . Հոգեւոր թղթախառի մէջ սիրելի քրիստոնեայ, 52 թղթներից իւրաքանչիւրի վրայ կը գտնես մի կարծ խրատ այն գովական առաքինութեանց վերաբերմամբ, որոնք մասին մեր աստուածային Փրկիչը իր շաբաթանցների միջոցին և մանաւանդ խաչի վրայից այսպէս թախանձագին քարոզում էր ամէնքին. և որ ինքը լիովին կատարելով, հրամայեց Նոյնը կատարել այն ամէն մարդուն, որ կը կամենար Գետնեւալ Նրան:

Ո՛վ քրիստոնեայ, եթէ դու երբեւէ ազատ ժամանակ ունենաս, մտածի՛ր որ ազատ ժամանակ անցկացնելն էլ պէտք է Նուրիս հոգու փրկութեան համար, որովհետեւ մարդու երկրաւոր կեանքը ոչ թէ մի ունայն զուարթութիւն այլ մի բոլորովին լուրջ խառ է: Նոյն իսկ ազատ ժամանակ անցկացնելու միջոցին էլ Ռիստոսի ժշմարիտ աշակերտը չպէտք է անուշաղիթ թողնի իր գլխաւոր նպատակը և խաղալիս պէտք է վարժուի առաքինութեանց մէջ: Կարծ կերպով Ս. Հոգու օգնութիւնը հայցելուց յետոյ, որ կարելի է անել բարեպաշտ մտքով, խառնի՛ր այդ հոգեւոր խաղաթղթերը, և յանուն Աստուծոյ համիր կամ հաննէ տոր մէկին մի թուղթ, կարդա՛ այն ուշադրութեամբ և առանձին ուշ դարձրու այն իւրաքելի և Աստուծոյ այն գաղտնեցի վրայ, որ տրուում են քեզ իբրեւ զէնք. առաքինօրէն ու

եռանդով սերտիք այն գրուածքը, որ առաջարկուում է քեզ, եւ զօրացրու քեզ, յաճախակի կովնելով խաղաթղթի վրայ գրուած մեղսաքաւիչ աղօթքը: Այսպէս, ո՛վ քրիստոնէայ, մի այսպիսի հոգեւոր թղթախաղում անց կ'ը կացնես ժամանակը, եւ ստիպուած չես լինի պատասխան տալու յաւիտեանական կեանքում այնքան կորցրած ժամանակիդ համար, որը կարող էր պատահել, եթէ դրա փոխանակ՝ զբաղուէիր աշխարհային խաղաթղթով . . .

Այս էլ մի ծանապարհ է դէպի երկնից արքայութիւնը . . . գոնէ այսպէս են կարծում կաթոլիկ պատէրները:

ՀՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ.

Այս տարուան մարտ ամսից իւր գործունէութիւնն սկսել է Կ. Պոլսում ռուսական հնագիտական կաթոլիկ Ս. Պետրոսը: Այս գիտնական կաճառի նպատակն է նպաստել ռուս գիտնականների հետազոտութիւններին, որոնք վերաբերում են Յունաստանի, Փոքր-Ասիայի եւ բոլոր հին քրիզանդական երկրների պատմութեան եւ հնախօսութեան: Այս հաստատութիւնը վարչական կողմից ստորադրեալ է ռուսական դեսպանատանը Կ. Պոլսում: Տէրութիւնը կաճառիս պահպանութեան համար տարեկան վճարում է 42,000 ռուկ ռուբլի: Այս նորահաստատ գիտնական հիմնարկութեան վերատեսուչ է նշանակուած Օղէտայի պրոֆէսոր Ռ. Ռուպինսկին:

Պ ե ղ ու մ ն եր . — Revue d' Assyriologie « Գանդիստում առաջ են բերած այն պեղումների արդիւնքը, որ տեղի են ունեցել հին Քաղդէայում: Լագաշ կամ Սիբրուլա հին քաղաքի տեղը փորելուս գտել են 50,000 սկւագիր արձանագրութիւններով ծածկուած աղիաներ: Այս աղիաները վերաբերում են քաղիտեան քաղաքակրթութեան հռչակագրի շրջանին. այսինքն՝ Քրիստոսից 4000 տարի առաջ ժամանակին: Այս աղիաները գտնուել են մի քանի տակ, որ գտնուում էր 200 մետր հեռու այն տեղից, ուր առաջ գտնուել էին երկրի թագաւորների շէնքերին հետքերը: Աղիաները 5—6 շարք էին կազմում միմեանց վրայ դիզուած, որոնցից բոլորովին անվաս մնացած են 5,000 աղիւս, իսկ 5,000 թծելու վաստուած են, մնացածներն կտորտանք են միայն, սակայն դրանցից էլ կարելի է քաւական շատ վերականգնել: Այս արձանագրութիւնները պայմանագրութիւններ, ցուցակներ եւ ստացումագրքեր են. ի միջի այլոց կայ եւ երկրի թագաւորի հօտերի ցուցակը, որից երեւում է թէ ի՛նչ մեծ նշանակութիւն ունէր այն ժամանակ խաշնապահութիւնը: Բացի այս աղիաներից կան եւ զանազան ձեւի կաւէ կտորներ, որոնք կնիքներ եւ անդրիքներ են:

Արձանագրութիւններից երեւում է, որ այս աղիաների մի մասը բարեկական առաջին շրջանիցն են, իսկ միւս մասը վերջին: Պատմական աշխարհագրութեան եւ քաղաքակրթութեան պատմութեան համար շատ արդիւնատու պիտի լինի այս արձանագրութիւնների ընթերցումը

Բացի աղիաներից գտնուել են այլ տեղ եւ այլ յիշատակարաններ, ինչպէս օրինակ երկու եզան զուէի, ռուկան թագաւորի պալատը այլ եւ քաղմաթիւ անօթներ եւ անդրիքներ, որոնցից մի մասը բոլորովին անվաս են մնացած: Այս պեղումներից հանուած բոլոր հնագիտական նիւթերը պիտի զետեղուին Կ. Պոլսի հնագիտական մուշէոնում:

Փրանսիացի գիտնական Եանտրը (Chantre) վերջերս պեղումներ է արել Փոքր Ասիայում, Կեսարիայից 4 մղոն դէպի հիւսիս, որտեղը կոչուում է Կարա-Վոյուց: Այս պեղումների արդիւնքն են եղել Դարձի վշտասպեանին եւ Քսերքսեսին վերաբերող մի քանի արձանագրութիւններ: Այս արձանագրութիւնները թրծած կաւէ տախտակների վրայ են եւ գրուած պարսկերէն. ամենամեծն այս տախտակներից

64 սմ. երկարութիւն եւ 43 սմ. լայնութիւն ունի. Արձանագրութիւնները վերաբերում են մի տաճարի եւ մի քանի այլ հիմնարկութիւնների շէնքութեան. այս գրութիւնների մէջ թագաւորների տիտղոսն է. Քսերքսէս (կամ Դարձի), մեծ արքայ, արքայից արքայ, որի Դարձի արքայի (կամ վշտասպի), Աքեմենեան:

Դ ր ա մ ա գ ի տ ա կ ա ն . — Նկոնիոյ կողմից մի շատ հետաքրքրական դրամ է գտնուած Սելուկների ժամանակից. այդ դրամի մի երեսի վրայ գրուած է Ռուսի (Փոքր Ասիոյ) թագաւոր Ալադիս Գ. Կէլքոքաղիքի Փէրմուզի անունն ու տիտղոսը, միւս երեսի վրայ Մողոնների իշխան Խաքան Մահմադի անունը: Այս դրամն երեսի 1500 թուականներիցն է եւ ցոյց է տալիս ժամանակի իշխանների յարաբերութիւնները: Այս Ալադիքը երկու անգամ գահ է բարձրացել Մողոնների իշխանի օգնութեան եւ անկախութեան ձգտելով վերջապէս գոհ է գնացել իւր պաշտպանի վրէժիխղորութեանը Սելուկեան շրջանի դրամներից շատ են գտնուում եւ Հայաստանում. այստեղ ամէն ինչ հայ գիւղում կարելի է Կուֆի եւ արաքական գրերով քաղմաթիւ դրամներ գտնել, սակայն ո՛վ է դրանց վրայ ուշք դարձնողները: Այսօրեքս իսկ մի քանի Լնի քաղաքից դարձող ուղեւորներ այդպիսի դրամներ տարին իրենց հետ, որոնց մէջ կար եւ մի հայերէն դրոշմով եւ հայկական դրամ, որի վրայ պարզաբար կարդացուում է ԿՈՒՐԱՎԱՏ անունը տիտղոսով, իսկ եղծուած յատուկ անունն հաւանական է ԿՈՐԻԳԷ կարգաւ:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱՆԱՆ

Աշխարհագրագէտների այս տարուան ժողովը տեղի է ունեցել Լոնդոնում, ուր օտար հիւրերը մեծ շքով ընդունուել են եւ փառաւոր ինչոքներով հիւրասիրուել: Այս ժողովի մէջ առանձին ուշադրութիւն է գրուել այն զեկուցում, որով արեւտուել է մի ցամաքի գիւտն հարաւային բեւեռում: Ինչպէս լրագիրներն հաղորդում են անգլիական կառավարութիւնն արդէն դրամ է նշանակել այդ նոր երկիրն ուսումնասիրելու համար ուղեւորուող հետազոտողների արշաւակիցի համար:


Ինչպէս ռուս լրագիրներն հաղորդում են, հայասեր Լինչը, որ երկու տարի առաջ Մասիսի գագաթը քարձրացաւ, մի ընդարձակ զեկուցագիր է կարդացել Հայաստանի մասին, ապացուցանելով որ այդ երկիրը մի արբողութիւն կազմող լեռնային քարձրաւանդակ է, որ կարծես բնութիւնից ստեղծուած է մի քաղաքական ամբողջութիւն կազմելու: Լինչի ընդդիմախօսել է ռուս աշխարհագրագէտներից մին եւ յանձնախումբն աջքի առաջ ունենալով այդ ինչորի քաղաքական քննադրութիւնը, վճռել է իւր աշխատանքների մէջ չը տպագրել: Յուսանք թէ պ. Լինչն առանձին հրատարակութեամբ ի լոյս կաճէ իւր հետաքրքրական աշխատութիւնը եւ քաղաքականութիւնը արգելք չի հանդիսանալ պատմական Հայաստանի գոնէ աշխարհագրական ուսումնասիրութեան:

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն

Գերմանական լրագիրներից մէկի թղթակիցն Սպանիայի դպրոցական ինչորների մասին խօսելով անհաւատիկ քաներ է հաղորդում սակայն յայտնի է, որ Սպանիայում դեռ շատ քան կարելի է, որ այլ եւրոպական երկրներում անհար է: Վերջին վիճակագրութիւնից երեւում է, որ Սպանիայի մի քանի գաւառների, մասնաւոր Անդալուզիայում համայնքները չեն սիրում ուսուցչաց ոռոգիւնը վճարել եւ դրանց պարտքը կէս միլիոնից անցնում է: Ետտ տեղ խնդր ուսուցիչներն ստիպուած են մուրացկանութիւն անել, որ սակայն վիրաւորում է հպարտ սպանիացիներին, ուստի եւ նահանգապետներն արգելել են ուսուցիչներին մուրացկանութիւն անելու:

Կանանց կրթութեան խնդիրը Գերմանիայում յառաջադիմութեան նոր քայլեր է անում: 1888 թ. Այմարում հիմնուած . Կանանց կրթութեան յեղափոխութեան . ընկերութիւնն արդէն ծանապարհ է քաց արել: այդ ընկերութիւնը կառուցուի՞ քաղաքում հիմնել է առաջին կանանց գիմնազիսը, ուր աղջկերը նոյն ուսումն են ստանում: Ինչ որ տղայք գիմնազիսներում: Այժմ արդէն պատրաստութիւններ են տեսնուում նոյնպիսի գիմնազիսներ քանազու քոտը մեծ

քաղաքներում: մանաւանդ որ կրթութեան նախարար պ. Բոսսէն հակառակ չէ դրան, ինչպէս երեւում է նոյն այն թղթաւորութիւնից որ այս օրերս շնորհել է մի օրհորդի գիմնազիսական ցնտութիւն տալու: Գիմնազիսական վկայականը իրականք է շնորհում համալսարան մտնելու, ահա թէ ի՞նչ քանի են ծագում կանայք Գերմանիայում: հասարակաց կարծիքը նրանց կողմն է եւ երկի շուտով գերմանացի դոկտորութից կը մրցեն դոկտորների հետ:



Ա Ջ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն .

Հ Ա Յ Ն ՈՒ ԻՒՐ Հ Ա Ր Ե Ի Ա Ն Ա Ջ Գ ԵՐ Ը .

I .

Ք Բ Գ Ի Է Ա Շ Ի Ի Ը .

Մէ Հայ մէ քրդի ճանաչ կեղծիւէդ հային օխտը հատ էծ կլինի կըտայ քրդին կասէ՛ տար պա- հի: Քուրդն էծեր կը տանի չուր տարին կը լմնայ: Հայն կերթայ քրդին տուն կասէ՛ քուրդ, բեր իմ էծեր տուր: էծեր պիտ տանեմ: Քուրդը կասէ՛ հայ, նստի ասեմ: քեզի, բու էծեր ինչխ եղեր ա.—

Ք ր դ ե ր է ն

Մը բը հիստա մրանի մընադդա խէյրանի,
 Մը բը հիստա սաղանի մընագոտ շքրանի,
 Բընէ համդ դաթլէ նսպոս,
 Բընէ քօլ քէաթմա դօլ,
 Բընէ չալ քէաթմա ճալ,
 Բընէ կաւար քէաթմ բըն դէաւար,
 Բընէ բալի բայանի սալէ ջօթակ կար անի,
 Ռարու սար խանի կոռան կրէն կոռանի,
 Լէխտան ճաւէ ոսատ դարանի,
 Մանի շարժեկը դօշտ մահոթ ճարմ՝ դա բը քիրա՛ի
 դալանի,
 Ղիգան կրէն ղիգանի քէր բըրըն փէնջար անի,
 Քեր ռեդակըր կալան անի կալան աւեթայ քոն-
 ջայ խանի,
 Դա տու արայի խօ բըդայ հասիկ շլանի,
 Աղ տու բըրըն բրայէ ախըր դամանի:

Լսեցի մտեկ ես՝ մէկը տուի ժամահացի.
 Լսեցի որ առողջ ես՝ մէկը մատաղ արեցի.
 Կարմրագոյն այծն ամենեկին մի հարցնի.
 Անեղջիւր այծն ընկաւ լիճը.
 Նախշուն այծն ընկաւ հորի մէջ.
 Կապոյտ այծն ընկաւ կենդանիների ոտնատակ.
 Կարճականջ այծն երկու ուլ բերեց տարին.
 Բարձրացաւ կտուր՝ տղերքը տղայութիւն արին.
 Զարկեցին, աջ աչքը հանեցին.
 Բերեցի մորձեցի, միսը կերայ, կաշին տուի կոթով
 դանակի.
 Աղջկերբն աղջկութիւն արին, դանակը տարան բան-
 ջար բերին,
 Դանակը կորցրին, կոթը բերին տան անկիւնը ձը-
 գեցին,
 Այժմ՝ դու տուր քո վերարկուն վարձ մեր հով-
 ուին,
 Այսուհետեւ ես և դու կը լինիք եղբայր ցվերջ
 աշխարհի:

II .

Թ ՈՒ Ր Ք Ի Հ Ա Շ Ի Ի Ը .

Մէ Հայ մի թուրքի հարեր ոչխար կը տայ ի պահ: Հայի ոչխարների ապուրը պակասած կեղծի: Հայը թուրքին կասէ՛ ոչխարներս տար պահէ, ձմեռնան արա, ինչ որ քո վարձն է կրկնակի ստացիր ինձմէ: Թուրքը կը յօժարի, ոչխար- ներ կառնու կըտանի: Սեւերես թուրքն օրէն մէ ոչխար մորթելով ձմեռնան կեղծի: վերջին ոչխարը մորթած, մորթին տա- կը ձգած, մի գաւաթ մաճուն առաւը դրած ուտելիս, Հայը կըզմայ թիխ իւր ոչխարներ: Հայը կասէ, թուրք բեր իմ ոչ- խարներ տուր որ տանեմ: Թուրքը կասէ՛ քի՛րվա (կնքարայր), նստի ոչխարներուդ հաշիւը տամ:—

Թ Ր ք ե ր է ն

Հ ա յ ե ր է ն

Գեօգ գիւղաղը եր փաթլաղը
 Դօխսանը բիբոյան չաթլաղի
 Գանջ թանա գալղը:
 Օմ թանա գալղը:
 Դաշտան դուշտը քաշ թողը
 Արես սօրա քէշ թողը:
 Գանջ թանա գալղը:
 Դօրթ թանա գալղը:
 Իքիսը վերղըմ գասարա
 Բիքը հէշ կեանթրմա հեսարայ:
 Դալղը բիբօսը (տակի մորթին ցոյց տալով)
 Բու դա բիբօսընը դարթը,
 Բուլուր վեր գօլընլարըն փարասը:

Երկինք որտոաց գետինըը պատառուց
 Ինձսուըը միանգամից տափը ծծեց:
 Քանի՛ հատ մաց:
 Տասը հատ մաց:
 Քարից ընկաւ գլխաւոր ոչխարը
 Մքան հետեւեցին միւս հինգ ոչխարը:
 Քանի՛ հատ մաց:
 Չորս հատ մաց:
 Երկուսը տուի մագործին:
 Մինը ամենեկին մի կցի հաշուին:
 Մնաց մին (տակի մորթին ցոյց տալով)
 Այս էլ մէկի մորթին
 Համայէ տուր ոչխարների վարձագին:

Հայը բարկանալով մաճունով գաւաթը կըտայ թուրքի գլխով: Թուրքը երեսը եւ միտըը մաճունաթափախ կասէ՛ Անամուղայ, քի՛րվա՛նըն հէսարը դրուտ վերղըք, ուզումե՞ք իմ շխտը = Փառք Աստուծոյ, մեր կնքարօք հաշիւը ուղիղ տուինք, երեսներս սպիտակ դուրս եկաւ: Ժ ա ն օ թ . Մոյն հաշուեցոյցի Քրդական մասը գրի եմ առել Քոռոնցի Առաքել վարդապետից, իսկ Թրքական մասը Փալըրվանցի Ստեփաննոս վարդապետից,